Տեղեկանք գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 6.

1) 3-րդ կետ

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով տնտեսվարող սուբյեկտ(ներ)ը գերիշխող դիրք ունեցող է(են) համարվում՝ հաշվի առնելով տվյալ ապրանքային շուկայի կառուցվածքի առանձնահատկություններն այդ շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների բաժինների բաշխվածության վերաբերյալ:
Սույն հոդվածում նշված տնտեսվարող սուբյեկտ(ներ)ը կարող է(են) ներկայացնել տվյալ ապրանքային շուկայում իր(ենց) գերիշխող դիրքի առկայությունը բացառող ապացույցներ:
Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով տնտեսվարող սուբյեկտ(ներ)ը չի(չեն) կարող ճանաչվել գերիշխող դիրք ունեցող, եթե նա, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով չի(չեն) գերազանցում տվյալ շուկայի մեկ քսաներորդը:

2) 5-րդ կետ

5. Առևտրային ցանցը համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե հանդիսանում է չորս կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբ*, որի առևտրային գործունեության մասով իրացման տարեկան շրջանառությունը գերազանցում է 500 մլն. դրամի շեմը:*